ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» հունիսի 2018 թ N 838-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 1134-Ն որոշման 8-րդ կետի 20-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 13-րդ կետի 20-րդ, 23-րդ կետի 10-րդ ենթակետերով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ:
2. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Լ. Ավետիսյանին:

Ա. ՎԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման
և կանխարգելման ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի
2018 թ. հունիսի 12-ի N 838-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հ	Անուն Ազգանուն	Պաշտոն, գիտական աստիճան
1.	**Արտավազդ Վանյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն, գիտական խորհրդի նախագահ, բ.գ.թ.
2.	**Յուրի Ալեքսանյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տնօրենի գիտական խորհրդական, ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր, գիտական խորհրդի փոխնախագահ
3.	**Գայանե Մելիք-Անդրեասյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տնօրենի տեղակալ գիտական գծով, բ.գ.դ., պրոֆեսոր, գիտական քարտուղար
4.	**Լիլիթ Ավետիսյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման

		ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ, բ.գ.թ.
5.	**Ալեքսանդր Բազարչյան**	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն, բ.գ.թ.
6.	**Նունե Բակունց**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ
7.	**Քրիստինա Գյուրջյան (համաձայնությամբ)**	ՀՀ առողջապահության նախարարության Հանրային առողջության բաժնի պետ, բ.գ.թ.
8.	**Սամվել Գրիգորյան (համաձայնությամբ)**	ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման, հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, բ.գ.դ, պրոֆեսոր
9.	**Վլադիմիր Դավիդյանց (համաձայնությամբ)**	ՀՀ ԱՆ գլխավոր համաճարակաբան, կ.գ.դ., պրոֆեսոր
10.	**Անահիտ Դեմիրճյանը (համաձայնությամբ)**	Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահությանը ֆակուլտետի ավագ գիտաշխատող
11.	**Կարինե Թեյմուրազյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի տնօրենի տեղակալ լաբորատոր գծով
12.	**Արմեն Հայրապետյան (համաձայնությամբ)**	բ.գ.թ.
13.	**Ալբերտ Ղազարյան (համաձայնությամբ)**	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի պարենային և ոչ պարենային ապրանքների անվտանգության գիտագործնական կենտրոնի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր
14.	**Անուշավան Վանցյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման

		ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի ակուստիկ և ֆիզիկական գործոնների հետազոտության բաժնի ավագ գիտաշխատող, ֆ/մ.գ.դ.
15.	**Արա Քեշիշյան**	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի մակաբուծաբանական լաբորատորիայի վարիչ, բ.գ.թ

Հավելված 2
ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման
և կանխարգելման ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի
2018 թ. հունիսի 12-ի N 838-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) հանդիսանում է Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համակարգող կոլեգիալ խորհրդակցական մարմինը:
2. Սույն կանոնակարգով սահմանվում են Գիտական խորհրդի հիմնական խնդիրները, գործառույթները, կազմը և կազմավորման կարգը, աշխատանքների կազմակերպումը:
3. Գիտական խորհրդի կազմը հաստատում է Կազմակերպության գլխավոր տնօրենը:
4. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
5. Գիտական խորհրդի որոշումները տարածվում են Կազմակերպության բոլոր աշխատակիցների վրա:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Գիտական խորհրդի նպատակը Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գիտական հետազոտությունների կազմակերպական, գիտամեթոդական և խորհրդատվական աջակցությունն է:

7. Գիտական խորհրդի խնդիրներն են.

1) Կազմակերպության գիտական գործունեության կանոնակարգումը բժշկագիտության զարգացման ժամանակակից միտումներին և միջազգային չափանիշներին համապատասխան,

2) Կազմակերպության անձնակազմի գիտական աստիճանաշնորհման և տարակարգման գործընթացը, կադրային քաղաքականությունը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Գիտական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) սահմանում է Կազմակերպության ստորաբաժանումների հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները,

2) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների և դրա մեջ փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ,

3) տարին մեկ անգամ քննարկում և առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության նախընտրելի ոլորտների գիտական աշխատանքների բյուջեից ֆինանսավորվող բազային ենթակառուցվածքի պահպանման և զարգացման գիտական ծրագրի, ինչպես նաև գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրման պայմանագրի նախագծերի վերաբերյալ և հաշվետվություն է ընդունում դրա կատարման վերաբերյալ;

4) առաջարկություններ է ներկայացնում.

ա. գիտահետազոտական գործունեության հարցերի շուրջ,

բ. միջազգային հաստատությունների հետ գիտական համագործակցության հարցերի շուրջ,

գ. Կազմակերպության աշխատակիցների գիտական աշխատանքի և բեղմնավոր գիտական գործունեության համար պարգևատրման և խրախուսման վերաբերյալ,

դ. Կազմակերպության գլխավոր տնօրենին՝ գիտահետազոտական ոլորտո(մ ընդգրկված ասոցիացիաներին և միություններին անդամակցելու վերաբերյալ (ներառյալ՝ միջազգային),

5) Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության գիտական գործունեության հիմնական հարցերը կարգավորող ներքին իրավական ակտեր,

6) Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացմամբ ապահովում է իրենց գիտական պլանների և ծրագրերի քննարկումը, վերանայումը և հաստատումը,

7) իրականացնում է գիտական թեմաների, աշխատությունների, նախագծերի, դրամաշնորհների և գիտական գործունեությանն առնչվող այլ հարցերի ղեկավարում և համակարգում, որոնք իրականացվում են Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,

8) քննարկում է գիտական և գիտամեթոդական գրականության հրատարակման վերաբերյալ հարցերը,

9) մշակում է գիտական կադրերի պատրաստման հետագա բարելավմանն ուղղված միջոցառումներ, քննարկում է նախագծեր ոլորտի գիտնական-մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի վերաբերյալ,

10) իրականացնում է ատենախոսական աշխատանքների թեմաների քննարկում, հաստատում, հետագայում իրականացված աշխատանքների նախնական քննարկում,

11) վերանայում է Կազմակերպության գիտական հետազոտությունների տարեկան և հեռանկարային զարգացման ծրագրերը և դրանց կատարման արդյունքները:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Գիտական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

10. Գիտական խորհրդի նախագահի կողմից կամ Գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել Գիտական խորհրդի արտահերթ նիստ: Գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ արտահերթ նիստ հրավիրելու դեպքում այդ մասին անդամները գրավոր առաջարկություն են ներկայացնում Գիտական խորհրդի նախագահին՝ նշելով այն հարցերը, որոնց համար առաջարկվում է արտահերթ նիստ: Գիտական խորհրդի նախագահը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում արտահերթ նիստի ժամանակի և վայրի մասին:

11. Գիտական խորհրդի նիստերին, բացի Գիտական խորհրդի անդամներից, կարող են մասնակցել Գիտական խորհրդի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

12. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Գիտական խորհրդի նախագահի կամ անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է:

13. Գիտական խորհրդի նիստերի արդյունքում կազմված արձանագրությունները ստորագրվում են Գիտական խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

14. Գիտական խորհուրդն աշխատում է ընդունված պլանի համապատասխան: Գիտական խորհրդի աշխատանքային պլանը հաստատվում է գիտական խորհրդի ընթացիկ տարվա հունվար ամսվա նիստի ընթացքում: Հարցերի առաջադրման նախաձեռնության իրավունքը պատկանում է նախագահին և անդամներին:

15. Գիտական խորհրդի նիստի օրակարգում հարցերի ներառման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գիտական քարտուղարին, ոչ ուշ քան

գիտական խորհրդի հերթական նիստից 10 օր առաջ՝ հիմնավորումներով և այլ օժանդակ նյութերի տեսքով:

16. Գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցի պատրաստման համար Գիտական խորհրդի նախագահը կարող է ստեղծել հանձնաժողով, որի պարտականություններն են անհրաժեշտ նյութերի ուսումնասիրությունը, խորհրդի նիստի ընթացքում հանդես գալը և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշման նախագծի պատրաստումը:

17. Գիտական խորհրդի անդամը, ով պատասխանատու է հարցի պատրաստման համար, ոչ ուշ քան գիտական խորհրդի նիստից 5 օր առաջ գիտական քարտուղարին է տրամադրում որոշման նախագիծը:

18. Որոշումների կատարման համար պատասխանատու անձինք պարտավոր են գրավոր զեկույցի տեսքով տեղեկացնել գիտական քարտուղարին որոշման մեջ սահմանված կատարման ժամկետի կամ դրա չկատարման մասին՝ նշելով պատճառները:

19. Գիտական խորհրդի բոլոր նիստերը համարվում են բաց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են սահմանափակ տարածման ենթակա տվյալներ պարունակող հարցեր: Նման նիստերին ներկայության և, խորհրդի թույլտվությամբ, հարցերի քննարկմանը մասնակցության իրավունք ունեն Կազմակերպության բոլոր անդամները: Փակ նիստերին մասնակցում են միայն գիտական խորհրդի անդամները:

20. Նիստից առաջ իրականացվում է գիտական խորհրդի անդամների գրանցումը: Գիտական խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրան մասնակցել է խորհրդի անդամների 2/3-ը:

21. Նիստը սկսվում է օրակարգի և աշխատակարգի (անհրաժեշտության դեպքում) հաստատմամբ:

22. Գիտական խորհրդի նախագահը և փոխնախագահը(ները) իրավունք ունեն ցանկացած պահի ելույթով հանդես գալ:

23. Եթե զեկուցողը գերազանցում է ելույթի իրեն հատկացված ժամանակը կամ նրա ելույթը չի վերաբերում քննարկվող հարցին, նիստի նախագահը մեկ զգուշացումից հետո կարող է նրան զրկել խոսքից:

24. Քննարկումն ավարտվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ ընդունված գիտական խորհրդի ներկա անդամների մեծամասնության կողմից:

25. Քննարկման ավարտից հետո զեկուցողը և համազեկուցողը իրավունք ունեն հանդես գալու եզրափակիչ խոսքով:

26. Քվեարկությունից առաջ նիստի նախագահը նշում է քվեարկության ենթակա առաջարկությունների քանակը և պարզաբանում է դրանց ձևակերպումները:

27. Գիտական խորհրդի որոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունվում են բաց քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ: Բաց քվեարկության ժամանակ նիստի նախագահը վերջինն է քվեարկում: Գիտական խորհրդի որոշումները ուժի մեջ են մտնում Գիտական խորհրդի նախագահի կողմից որոշումը ստորագրելու պահից:

28. Գիտական խորհրդի արձանագրությունները արխիվացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

29. Արձանագրությունների՝ ժամանակին ձևակերպման և դրանց արխիվացման համար պատասխանատվությունը կրում է գիտական խորհրդի քարտուղարը:

30. Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

31. Ձայների հավասարության դեպքում Գիտական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Գիտական խորհուրդը նախագահում է Կազմակերպության գլխավոր տնօրենը, իսկ նրա բացակայության դեպքում վերջինիս փոխարինում է գիտական քարտուղարը:

33. Գիտական խորհրդում, նախագահի որոշմամբ, կարող են ընդգրկվել Կազմակերպության առանձին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և Կազմակերպությունում աշխատող ու գիտական աստիճան ունեցող մասնագետները:

34. Գիտական խորհրդի կազմի մեջ են մտնում հրավիրված դոկտորական և թեկնածուական գիտական աստիճան ունեցող գիտնականներ, որոնց ներկայությունը գիտական խորհրդում անհրաժեշտ է լուծվող հարցերի շրջանակներից ելնելով:

35. Գիտական խորհրդի կազմում նախատեսվում է գիտական խորհրդի քարտուղարի պաշտոն, որը կարող է զբաղեցնել Կազմակերպության գիտական աշխատակիցներից մեկը:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

36. Գիտական խորհրդի նախագահը՝

1) համակարգում է Գիտական խորհրդի աշխատանքը՝ ապահովելով Գիտական խորհրդի բնականոն գործունեությունը.

2) կազմակերպում է Գիտական խորհրդի աշխատանքը, սույն կարգով իրեն վերապահված լիազորություններին համապատասխան,

3) հրավիրում և վարում է Գիտական խորհրդի նիստերը՝ հաստատված օրակարգի համաձայն,

4) սահմանում է Գիտական խորհրդի հերթական և արտահերթ նիստերի վարման ժամանակացույցը

5) լուծում է այլ հարցեր՝ կապված Գիտական խորհրդի գործունեության կազմակերպման հետ, համաձայն սույն կարգի, Կազմակերպության կանոնադրության և այլ իրավական ակտերի:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

37. Գիտական խորհրդի անդամները՝

1) իրավունք ունեն.

ա. հարցեր ներկայացնել խորհրդի քննարկմանը.

բ. առաջարկություններ ներկայացնել խորհրդի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

գ. ըստ անհրաժեշտության մասնակցել Գիտական խորհրդի հանձնաժողովների աշխատանքին.

դ. ծանոթանալ նիստի օրակարգին վերաբերող բոլոր նյութերին և Գիտական խորհրդի այլ փաստաթղթերին, խորհրդի նիստերի արձանագրություններին և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ.

ե. արահայտել սեփական կարծիքը քննարկվող հարցերի շուրջ,

2) Պարտավոր են.

ա. ներկա գտնվել Գիտական խորհրդի նիստերին,

բ. գրանցվել գրանցման թերթիկում նիստից առաջ,

գ. անձնական պատասխանատվություն կրել նիստին անհարգելի բացակայության դեպքում,

դ. պատրաստել և տրամադրել գիտական քարտուղարին նիստի անցկացման համար անհրաժեշտ նյութերը,

ե. մասնակցել բաց քվեարկությանը,

զ. մասնակցել խորհրդի աշխատանքներին.

է. իրենց իրավասության սահմաններում իրագործել խորհրդի որոշումները:

38. Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Անդամի ձայնի իրավունքի փոխանցումը մեկ այլ անդամի արգելվում է:

39. Գիտական խորհրդի նիստին հարգելի պատճառներով մասնակցելու անհնարինության դեպքում գիտական խորհրդի անդամն այդ մասին պետք է նախապես տեղեկացնի նախագահին կամ քարտուղարին:

40. Գիտական խորհրդի անդամի՝ նիստերին անհարգելի կրկնակի բացակայության դեպքում, Գիտական խորհրդի նախագահը իրավունք ունի պարտավորեցնել Գիտական խորհրդին որոշում կայացնել այդ անդամի լիազորությունների վաղաժամ դադարեցման վերաբերյալ:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

41. Գիտական խորհրդի քարտուղարը՝

1) ապահովում է խորհրդի նիստերի կազմակերպումը,
2) պատրաստում է Գիտական խորհրդի աշխատանքային պլանի նախագիծը և վերահսկում է դրա իրականացումը,
3) նախագահի հաստատմանն է ներկայացնում նախատեսված օրակարգը, նիստի անցկացման ամսաթիվը և վայրը,
4) ծանուցում է Գիտական խորհրդի անդամներին նիստի անցկացման վայրի, ամսաթվի և օրակարգի մասին, ոչ ուշ քան նիստից 5 օր առաջ, իսկ արտահերթ նիստից դեպքում՝ առնվազն 1 օր առաջ:
5) վերահսկում է Գիտական խորհրդի նիստի հարցերի և որոշումների նախագծերի պատրաստման աշխատանքները,
6) գրանցում է Գիտական խորհրդի ներկա անդամներին,
7) կազմակերպում է քվեարկությունը,
8) ձևակերպում է Գիտական խորհդի նիստի արձանագրությունը, ինչպես նաև արձանագրություններից քաղվածքները,
9) ապահովում է Գիտական խորհրդի որոշումների տրամադրումը համապատասխան կատարողներին,
10) վերահսկում է Գիտական խորհրդի որոշումների իրականացումը,
11) ապահովում է խորհրդի նիստի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

12) ապահովում է խորհրդի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում խորհրդի անդամների դիտողությունների ու առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.
13) ապահովում է խորհրդի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.
14) ապահովում է խորհրդի գործունեության մասին տեղեկատվության պարբերական հրապարակումը Կազմակերպության կայքում.
15) խորհրդի քարտուղարի բացակայության դեպքում նրան փախարինում է խորհրդի անդամներից որևէ մեկը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

VIII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

42. Գիտական խորհրդի գործունեությունը դադարում է Կազմակերպության գլխավոր տնօրենի հրամանով: